

Հաշվետվություն

Արարատի մարզի Մրգավետ համայնքի ղեկավարի 2018թ-ի

երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների

23.01.2019թ. Մրգավետ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը վարում էր

համայնքի ղեկավար Լ.Աբրահամյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝

Ն. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին համայնքապետարանի

աշխատակազմը, մանկապարտեզի տնօրեն՝ Ն. Գևորգյանը, հայփոստի և բուժ.

ամբուլատորիայի աշխատակցուհիները, ավագանու անդամները,

գրադարանավարուհին, դպրոցի տնօրենը և համայնքի մի քանի բնակիչներ:

Լսեցին՝ Մրգավետ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 28-ի

դրությամբ կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ երկրորդ կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Համայնքապետարանում բնակչությունից ընդունել է 127 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստի ժամանակ, և տրվել են համապատասխան լուծումներ:

2018թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ համայնքապետարանը բնակիչներին տվել է 335 տեղեկանք, ստացել 110 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

2018թ. երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել են համայնքի վարչական տարածքում սահմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները և փողոցները: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասի չափագրման, սահմանների ճշգրտման, հողամասերի փոփոխման և ձևակերպման աշխատանքները:

Նշվեց անապահով ընտանիքներին, հարազատին կորցրած անձանց անհատույց հատկացումներ կատարելու մասին: Համայնքի սոց. անապահով ընտանիքներին տրվել է 1.969.000 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսուհինը հազար) դրամ, հարազատին կորցրած անձանց տրվել է 290.000 (երկու հարյուր ինսուսուհազար) դրամ ֆինանսական աջակցում,

աղբահանության աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 2.549.000 (երկու միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար) դրամ:

Դեկտեմբերի 28-ի դրությամբ եկամտային մասով կազմում է 57.946.000 (հիսուսույթ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար) դրամ, տարեկանի կտրվածքով կատարվել է 100%:

2018թ երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների՝

1.Հողի հարկ – 4.900.000

2.Գույքահարկ –11.021.300

3.Տեղական տուրքեր –416.350

4.Աղբահանության վճար-1.050.270

Համայնքի ղեկավար



Լ. Աղբահանյան